

## ԳԱՅԱՆԵ ՇԱԽԿՅԱՆ

### ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԶՆԿԱ ԵՎ ԷՐԶՐՈՒՄ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԱՅԻ ՈՒՂԵԳԻՐՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ XIX Դ.

XIX դ. գերմանացի բազմաթիվ ճանապարհորդներ և ուղեգիրներ, հետազոտություններ կատարելու նպատակով այցելել են ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստան: Այդ ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի գրեթե ամբողջ տարածքը գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության տակ: Հայ ժողովրդի տնտեսական և սոցիալական ծանր կացությունը տարիներ շարունակ գտնվում էր օտարազգի հեղինակների ուշադրության կենտրոնում:

Գերմանացի հեղինակներ և ուղեգիրներ Էվալդ Բանսեն, Առմանդ Ֆրայհեռ ֆոն Շվայգեռ Լեռնենֆելդը, Համմեր Պուրզլիալը, Հերման Աբիխը, Լեհման Հաուֆթը, Էդուարդ Նոլդեն, Ա. Ռիթթեռը և այլք բազմիցս եղել են Արևմտյան Հայաստանի տարբեր քաղաքներում և նահանգներում (գավառներում)՝ իրենց տպավորությունների վերաբերյալ արժեքավոր աշխատություններ հեղինակելով Հայաստանի ու հայերի մասին:

Մեր հոգվածի շրջանակներում անդրադարձել ենք հատկապես Երզնկա և էրզրում քաղաքներին: Երզնկա քաղաքը՝ դարեր շարունակ, դեռևս հեթանոսական ժամանակներից համարվելով Հայաստանի հոգևոր կենտրոններից մեկը, իսկ էրզրումը, գտնվելով հարևան երկրների առևտրային տարանցիկ ճանապարհների խաչմերուկում և համարվելով արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ անցնող բոլոր ուղղությունների կենտրոնում՝ մշտապես հետաքրքրել է օտարազգի հեղինակներին: Էրզրումը Արևմտյան Հայաստանի ամենամեծ քաղաքն էր և աշխարհագրական բարեհաջող դիրքի պատճառով հանդիսանում էր կովախնձոր՝ հարևան տերությունների համար:

Այս երկու քաղաքների՝ վերը նշված նշանակություններից բացի, մեր հոգվածի շրջանակներում փորձել ենք քննության առնել նաև դրանց ժողովրդագրական տեղաշարժերին վերաբերող որոշ մանրամասներ:

Էվալդ Բանսեն իր «Թուրքիա»<sup>1</sup> աշխատության մեջ Երզնկան անվանում է էրզինճեան<sup>2</sup> նշելով նաև, որ անտիկ շրջանում այն անվանել են նաև Ազիրիս<sup>3</sup>:

<sup>1</sup> Banse Ewald, *Die Türkei*, Berlin, 1919.

<sup>2</sup> Banse Ewald, էջ 204:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 204:

էրզինճեան անվանումն Երզնկա քաղաքի թուրքերեն անվանումն է<sup>4</sup>, և քանի որ է. Բանսեի աշխատությունը կոչվում է Թուրքիա, այդ պատճառով էլ նա քաղաքն անվանում է այնպես, ինչպես հիշատակվում է թուրքական աղբյուրներում: Գերմանացի հայտնի լեզվաբան Հ. Հյուբշմանը իր՝ «Հին հայկական տեղանուններ»<sup>5</sup> աշխատության մեջ այն անվանում է Երիզա, իսկ ավելի ուշ Երզնգա<sup>6</sup>, իսկ արաբներն այն անվանել են Արզանյան<sup>7</sup>:

Երզնկա քաղաքի աշխարհագրական դիրքը հետաքրքրել է գերմանացի հեղինակներին, և նրանց աշխատություններում հիմնականում խոսքը վերաբերում է քաղաքի զբաղեցրած դիրքին: Լեհման Հաուփթը նշում է, որ «քաղաքը շրջապատված էր լեռնաշղթաներով, որոնց առկայությունը շատ հարմար էր թշնամու հարձակումներից պաշտպանվելու համար»<sup>8</sup>: Երզնկան ընկած էր հացահատիկային ու մրգային տարբեր տեսակներով հարուստ տարածքների, արոտավայրերով պատված լեռների վրա, որտեղ հաճախակի տեղի էին ունենում երկրաշարժեր՝ հարթությունների վրա առաջացնելով անցքեր<sup>9</sup> և այլն»:

Գերմանացի հայտնի երկրաբան Հերման Աբիխը երկրաբանական և աշխարհագրական հետազոտություններ է կատարել նաև Երզնկայում, որտեղ հայտնաբերել է բազմաթիվ հանքեր: Ըստ նրա այնտեղ առկա են հատկապես ասֆալտի, գիպսի, աղի, ածուխի, նավթի հանքեր, տաք ջրերի պաշարներ, որոնք սակայն քաղաքում տիրող տնտեսական ծանր կացության պատճառով չեն շահագործվում: Բացի դրանից Հ. Աբիխը գծագրել է նաև քաղաքի ամբողջական հատակագիծը՝ դուրս գալով նրա սահմաններից՝ ներառելով նաև Արաքսի հովիտը՝ հասնելով մինչև Ալեքսանդրապոլ<sup>10</sup>:

Հայերի՝ թուրքական տիրապետության տակ գտնվելու հանգամանքը մշտապես հետաքրքրել է եվրոպական հեղինակներին, և բազմիցս նրանք անձամբ այցելել են այդ տարածքները՝ ավելի ստույգ ու հավաստի տեղեկություններ ստանալու նպատակով: Օտարազգի հեղինակների համար հայերը եղել են կայուն ու իրենց ավանդույթներին, կրոնին, լեզվին և արմատներին ամուր կառած ժողովուրդներից: Նրանց աշխատասիրությունը, ձգտումը բարձունքների և բարեկեցության հասնելու ու իրենց ինքնուրույնությունը օտարի լծի տակ պահպանելու մեծ ցանկությունը մշտապես առաջնորդել է այս ժո-

<sup>4</sup> Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտ. 1, Վենետիկ 1902, էջ 798:

<sup>5</sup> H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen, Strassburg 1904:

<sup>6</sup> H. Hübschmann, էջ 286:

<sup>7</sup> Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Եր., 1986, էջ 47:

<sup>8</sup> Lehmann Haupt C. F., Armenien Einst und Jetzt, Bd. I, Berlin, 1910, էջ 167.

<sup>9</sup> Banse Ewald, նշվ. աշխ., էջ 204:

<sup>10</sup> Hermann Abich, Aus kaukasischen Ländern, Bd. II, Wien, 1896, էջ 25-26. Տե՛ս նաև Banse Ewald, Die Türkei, Berlin, 1919, էջ 204:

ղովրդին ցանկացած ծանր կացությունից ելք գտնելու ճանապարհին: Էրբերտ Ռոդերիխը իր «Կովկասը և իր ժողովուրդները»<sup>11</sup> աշխատության մեջ ուղիղ համեմատական անցկացնելով Կովկասում ապրող ժողովուրդների միջև՝ նշում է, որ այնտեղ ապրող 780.000 հայերը (թվաքանակին վերաբերող աղբյուրը չի նշում) իրենց կրթվածությամբ և ճարակությամբ հատուկ, կարևոր դեր ունենին Կովկասի ամբողջ տարածքում: Նրանք ապրում էին հնամենի ավանդույթներով, սակայն մշտապես տիրապետում էին Կովկասի կապիտալին ու ունենին նյութական հետաքրքրություններ: Այդ ժողովուրդը հատուկ ակնածանքով և գերուշադրությամբ էր պահպանում իր կրոնը, լեզուն, գիրն ու գրականությունը: Հայկական արվեստն ու գիտությունը մշտապես գտնվում էր ծաղկման շրջանում<sup>12</sup>:

Արմանդ Ֆռայհեռ Լեռնենֆելդը, անդրադառնալով Երզնկային, փաստում է նրա հոգևոր կենտրոն լինելը. «Էրզրումից 25 մղոն հեռավորության վրա գտնվող Երզնկան գտնվում է ավելի բանուկ քարավանային ճանապարհի վրա: Եթե Էրզրումը համարվում է Հայաստանի քաղաքական ու պատմական կենտրոնը, ապա Երզնկան հայկական կրոնական պաշտամունքի հնամենի նստավայրն է՝ հեթանոսական և քրիստոնեական կենտրոնը: Երզնկան հին ժամանակներում եղել է Հայաստանի հոգևոր կենտրոնը, ինչպես այժմ էջմիածինն է»<sup>13</sup>, «Այստեղ գտնվում են երեք միայնակ վանքեր, որոնք ասես գտնվում են թաքստոցներում, որտեղ ոչ միայն բարբարոսի ձեռքը, այլ նույնիսկ քաղաքակրթության ճառագայթն անգամ չի կարող ներխուժել: Այստեղ են գտնվում նաև հայկական Արտեմիսի (Անահիտի) և խալդական Վարշամի (արևի որդու) սրբատեղիները»<sup>14</sup>: Այստեղից հետևում է, որ գերմանացի ճանապարհորդի վկայությամբ Երզնկայում գործում էին հայկական 3 վանքեր անկասկած հայ հոգևորականներով, որոնք սակայն ըստ նրա՝ կրթված չէին: Երզնկան Հայաստանի հեթանոսական շրջանի կրոնական կարևորագույն կենտրոններից էր: Այստեղ էր գտնվում հայ հեթանոսական գլխավոր աստվածուհիներից՝ Անահիտի տաճարը, ինչպես նաև աստվածուհու բրոնզե արձանը, որը մ.թ.ա. 30 թ. հափշտակել և իբրև ավար Հռոմ է տարել Անտոնիոս զորավարը<sup>15</sup>:

<sup>11</sup> Erckert Roderich von, *Der Kaukasus und seine Völker*, Leipzig 1887.

<sup>12</sup> Erckert Roderich von, նշվ. աշխ., էջ 327-331:

<sup>13</sup> Armand Freiherr v. Schweiger Lerschenfeld, *Zwischen Donau und Kaukasus. Land-und Seefahrten im Bereiche des Schwarzen Meeres*, Wien, Pest, Leipzig 1887, էջ 539:

<sup>14</sup> Armand Freiherr v. Schweiger-Lerchenfeld, *Armenien (Ein Bild seiner Natur und seiner Bewohner)*, Jena 1878, էջ 60:

<sup>15</sup> Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, ԵՊՀ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ II, Թ. Խ. Հակոբյան, Եր., 1988, էջ 235:

Հատկանշական է գերմանացի հեղինակների համար այն փաստը, որ Երզնկայով են անցել առևտրային, քարավանային ճանապարհը՝ հյուսիս արևմուտք ուղղությամբ, որը բավականին երկար էր, սակայն շատ բանուկ, քանի որ Տրապիզոնի վրայով անցնող առևտրային մյուս ճանապարհը բավականին դժվարամատչելի էր<sup>16</sup>։ Խոսքը վերաբերում է Թավրիզ-Էրզրում-Երզնկա տարանցիկ առևտրային ճանապարհին։ Բացի այդ ուղիներից, քաղաքը առանձին ճանապարհով կապված էր Հալեպի հետ՝ Տրապիզոնի և Սեբաստիայի վրայով<sup>17</sup>։

Երզնկա քաղաքը գտնվելով առևտրային ուղիների խաչմերուկում՝ ուներ կայազոր, որը, ըստ Բանսեի, վերահսկում էր արտահանվող առևտուրը։ Հեղինակը գրում է, որ այստեղից արտահանում էին հատկապես մրգեր, որոնք իրենց երկրից տանում էին հարևան, մրգերից աղքատ շրջաններ։ Նա գրում է, որ այս գավառում կա մի շատ հետաքրքիր զբաղմունք՝ լորի որսը։ Ամեն տարի գարնանը՝ հորդառատ անձրևներից հետո, այստեղ սկսվում է որսը։ Լորերին որսում էին մեծ քանակությամբ ու մի մասը նաև արտահանում<sup>18</sup>։ Գերմանացի հեղինակը վկայում է, որ դեռևս XIX դ. երկրորդ կեսին Երզնկայում գործել է նաև մաքսակետ։ Հետաքրքրական է, արդյոք գերմանացի հեղինակները հայերի զբաղմունքներին անձամբ են ականատես եղել, թե պարզապես տեղեկություններ են հավաքել՝ գտնվելով այդ տարածքում։

Գերմանացի հեղինակները հայ ժողովրդի թվաքանակին և տեղաշարժերին վերաբերող բավականին հետաքրքիր տեղեկություններ են մեզ տալիս՝ մեջբերելով նաև եվրոպական և թուրքական մարդահամարների տվյալները։

Բանսեի տեղեկությունները չափազանց կարևոր են Երզնկա քաղաքի ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ։ Նա նշում է, որ «Հայերի թիվը Երզնկա քաղաքում հասնում է 30.000-ի, որը կազմում է ամբողջ տարածքի բնակչության 1/4-ը»<sup>19</sup>։ Ա. Մելքոնյանը «Էրզրում»<sup>20</sup> աշխատությունում մանրամասն քննության է ենթարկել Երզնկա քաղաքի գավառի հայ բնակչության թվաքանակը, որտեղ նշում է, որ դարասկզբին հաշվվում էր 900 բնտանիք կամ 5400 մարդ<sup>21</sup>, իսկ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին Երզնկա գավառի քրիստոնյա գյուղական հայության թիվը կազմում էր 30.080

<sup>16</sup> Armand Freiherr von Schweiger Lerschenfeld, Zwischen Donau und Kaukasus. Land- und Seefahrten im Bereiche des Schwarzen Meeres, Wien 1887, էջ 539։ Տե՛ս նաև Banse Ewald, նշվ. աշխ., էջ 204։

<sup>17</sup> Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. II, Եր., 1988, էջ 236։

<sup>18</sup> Banse Ewald, Die Türkei, Berlin 1919, էջ 204։

<sup>19</sup> Նույն տեղում։

<sup>20</sup> Ա. Մելքոնյան, Էրզրում, Եր., 1994։

<sup>21</sup> Ա. Մելքոնյան, Էրզրում, Եր., 1994, էջ 116։

մարդ, մահմեդականացած գյուղական հայություն և կեսկեսների թիվը 9280, այսինքն ընդամենը 39.360 մարդ: Փաստորեն, Բանսեի նշած 30000-ը վերաբերում է երգնկա գավառի զուտ քրիստոնյա հայ բնակչության թվին, այլ ոչ թե քաղաքին, քանի որ Բանսեն երգնկայում եղել է 1870-ական թթ., երբ հայ բնակչության թիվը նվազել էր 1828-1829 թթ. ուսա-թուրքական պատերազմից հետո տեղի ունեցած տեղաշարժերի արդյունքում:

Ըստ Ա. Ռիթերի «Օսմանյան կայսրության ժողովուրդները»<sup>22</sup> աշխատության՝ 1872 թ.-ի վիճակագրական տվյալների հիման վրա երգնկան ուներ 743 քառակուսի մղոն տարածք, որտեղ ապրում էին ընդհանուր առմամբ 128.236 մարդ, որից 104.502 մահմեդական, իսկ 13.734 ոչ մահմեդական: Հեղինակը անդրադարձել է նաև թուրքական պետական մարդահամարի տվյալներին, ըստ որոնց երգնկայում կար 27.734 շինություն և 57.306 բնակիչ: Այնուամենայնիվ, վերը նշված թվաքանակները դեռևս հայերին չէին վերաբերում, այլ վերաբերում էին քրիստոնյաներին, սակայն այդ տարածքում հայերից բացի ապրում էին նաև քրիստոնյա այլ ժողովուրդներ: Այնուամենայնիվ, հայերի թվաքանականը գերակշիռ էր<sup>23</sup>:

Թուրքական պետական մարդահամարի 1877-1878 թթ. Տվյալների համաձայն՝ երգնկայում կային 23.734 շինություններ, իսկ բնակչության թիվը կազմում էր 57.306 մարդ<sup>24</sup>: Սակայն չի նշվում մահմեդականների և քրիստոնյաների հստակ թվաքանակը:

Սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ թուրքական կառավարությանը ձեռնտու չէր ճշգրիտ տվյալներ հրապարակել հայ բնակչության իրական թվաքանակի մասին, ապա կարելի է այն համարել պարզապես հերթական վիճակագրական տվյալ:

### ԷՐԶՐՈՒՄ

Երգնկա այցելելու հետ միաժամանակ գերմանացի ուղեգիրները եղել են նաև էրզրում քաղաքում ուսումնասիրելով նրա աշխարհագրական դիրքը, քաղաքական նշանակությունը, բնակչության հիմնական զբաղմունքներն ու ժողովրդագրական տեղաշարժերը:

Հերման Աբիխը էրզրումում եղել է XIX դ. երկրորդ կեսին և նշում է, որ Կարինը՝ էրզրումը, Թեոդոսիոսի ժամանակներում կազմել է Մեծ Հայքի մի մասը, ում պատվին էլ 415 թ. հիմնադրված քաղաքն անվանվել է նաև Թեոդոսիոպոլիս, ավելի ուշ Արզրում: Նա նշում է, որ էրզրումը մշտապես համարվել է Հայաստանի ամենամեծ քաղաքը, իսկ հայերի շրջանում էրզրումի Կարին անվանումը պահպանվել է մինչև օրս<sup>25</sup>:

<sup>22</sup> A. Ritter, Zur Helle von Samo, Die Völker des Osmanischen Reiches, Wien 1877:

<sup>23</sup> A. Ritter, նշվ. աշխ., էջ 97-98:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 97-98:

<sup>25</sup> Hermann Abich, Geologie des Armenischen Hochlandes, Wien, 1882, էջ 71:

Բոլոր հեղինակներն էլ իրենց աշխատություններում առաջին հերթին նշում են, որ էրզրումը գտնվում է առևտրային ուղիների խաչմերուկում՝ համարվելով Հայաստանի կենտրոնական կետը, որը նշանակալի տրանսպորտային հանգույց է և աշխարհի տարբեր ուղղություններից եկող քարավանային ճանապարհները հատվում են հենց այս տարածքում<sup>26</sup>։ Բացի դրանից, Տրապիզոն տանող առևտրային գլխավոր ճանապարհը անցնում է էրզրումի հարավային մասով և հյուսիսում հատվում է ամայի տարածքների՝ որոնց շնորհիվ քաղաքը ապահովվում է արտաքին ավազակային հարձակումներից<sup>27</sup>։

Բարոն Էդուարդ Նոլդեն իր աշխատության մեջ ևս հաստատում է, որ էրզրումը համարվում է միջանցիկ առևտրային կենտրոն՝ միաժամանակ լինելով նաև ռազմական և քաղաքական կարևոր նշանակություն ունեցող տարածք՝ հարևան երկրների համար։ Դա էր պատճառը, որ յուրաքանչյուրը ցանկանում էր տիրանալ այդ անառիկ քաղաքին։ Բացի դրանից էրզրումի գրավումը կնշանակեր ազատ մուտք դեպի Կ. Պոլիս<sup>28</sup>։

Գրեթե բոլոր հեղինակների մոտ մենք հանդիպում ենք այն տեսակետը, որ օսմանյան տիրապետությունն ամեն կերպ փորձում էր ճնշել հայ ժողովրդին՝ զրկելով նրան ազատ գործելու, արարելու, հանգիստ ապրելու հնարավորությունից։ Քանի որ, Օսմանյան կայսրությունում թուրքերը զբաղվում էին միայն անասնապահությամբ, երբեք հետաքրքրված չեն եղել կրթության և տնտեսապես զարգացվածության մեջ, այդ իսկ պատճառով հայերի տնտեսական և քաղաքական աճը այդ տարածքում, այն էլ իրենց տիրապետության ներքո, արդեն իսկ ընդունելի չէր նրանց համար։ Գերմանացի հեղինակների աշխատություններում մենք բազմիցս հանդիպում ենք նմանատիպ արտահայտությունների. «տարածքի ընդհանուր լքվածությունը, այնտեղ տիրող իշխանության անիրավական ռեժիմը ժամանակի ընթացքում սպանել են արտադրական ու սոցիալական ազատ կյանքը»<sup>29</sup>, «չնայած, որ հայերը գտնվում էին տնտեսապես և մշակութային առումով հետամնաց Թուրքիայի տիրապետության տակ, այնուամենայնիվ նրանք մշտապես հանդես էին գալիս հավուր պատշաճի»<sup>30</sup>։ «Այսօրվա էրզրումը,- ինչպես նշում է Համմեր Պուրգենշտալը,- խղճուկ, շատ քայքայված մի քաղաք է՝ ամենաշատը 30 հազար բնակչությամբ։ Նա ժամանա-

<sup>26</sup> **Armand Freiherr von Schweiger-Lerchenfeld**, *Zwischen Donau und Kaukasus*, Leipzig, 1887, էջ 538:

<sup>27</sup> **Banse Ewald**, *Die Türkei*, էջ 204:

<sup>28</sup> **Baron Eduard Nolde**, *Reise nach Innenarabien, Kurdistan und Armenien* 1892, Braunschweig 1895, էջ 259-262:

<sup>29</sup> **Armand Freiherr v. Schweiger-Lerchenfeld**, *Armenien*, Jena, 1878, էջ 56:

<sup>30</sup> **H. Abich**, *Aus Kaukasischen Ländern*, Band II, էջ 20:

կին հարյուր հազարավորներն է ունեցել և միայն օսմանյան տիրապետության տակ գտնվելով դարձել է ապստամբատեղի՝ հարևան Պարսկաստանի դեմ»<sup>31</sup>։

Գերմանացի հեղինակներին հետաքրքրել էր նաև էրզրումի միջնաբերդը<sup>32</sup>, որին թուրքերը անվանում էին «Իշ Կալե (*Itsch-Kaleh*)», հայերեն թարգմանությամբ «Ներքին պալատ», որտեղ կտրել են Օսմանյան կայսրության ղեկավարի՝ Փադիշահի ոսկյա դրամները։ Այստեղ էին հավաքվում նաև քաղաքի հարկահանությամբ զբաղվող թուրք ենիչերներից գանձվող հարկերը՝ իրենց պաշտոններում մնալու համար<sup>33</sup>։ Միջնաբերդը գտնվում էր քաղաքի կենտրոնում՝ երեք բլուրների վրա՝ շրջապատված կրկնակի պարիսպներով։ Այստեղ կան գաղտնի գետնուղիներ, զինանոցներ, պահեստներ և զորանոցներ<sup>34</sup>։

Գերմանացի հեղինակների հետ մեկտեղ Արևմտյան Հայաստանի քաղաքներով հետաքրքրված են եղել նաև այլազգի ճանապարհորդներ։ Անգլիացի ճանապարհորդ Վ. Համիլտոնը ուսումնասիրել է էրզրումի եկեղեցիների ճարտարապետական ոճերը, որոնք նմանեցրել է Անիի եկեղեցիների ճարտարապետությանը։ Հեղինակը նշում է, որ էրզրումում պահպանվել էին հայկական 2 եկեղեցիների մնացորդներ և մեկ ամրոցի ավերակներ, իսկ շրջակա միջավայրն ամայի էր և անհետաքրքիր։ Այստեղ ճարտարապետական ոճը հիմնականում հիշեցնում էր բյուզանդական և մավրիտանական<sup>35</sup> (արաբական) ճարտարապետությունը։ Եկեղեցիները և նմանատիպ շինությունները կարծես զինապահեստներ լինեն, որտեղ առկա էր մեծ քանակությամբ ռազմամթերք։ Քաղաքի մզկիթները, ինչպես նշում է Համիլտոնը, լքված և արտաքինապես շատ աղտոտված էին։ Կեղտոտ ու անհրապույր էին նաև փողոցները, որոնցից գարշահոտություն էր փչում, սակայն նման վիճակը թուրքական քաղաքում ինքնըստինքյան պարզ էր<sup>36</sup>։

Գերմանացի հեղինակներն անդրադարձել են նաև էրզրում քաղաքի բնակչության թվաքանակին։ Է. Բանսենը նշում է, որ «հայերի գաղթի հետևանքով, քաղաքի բնակչությունը ժամանակի ընթացքում նվազեց (մոտ 150.000 հայ

<sup>31</sup> Hammer Burgstall, *Geschichte der Osmanen*, B. III, էջ 530: Մանրամասն տե՛ս նաև Armand Freiherr v. Schweiger-Lerchenfeld, *Armenien*, Jena, 1878, էջ 48:

<sup>32</sup> Այն արտաֆնապես կարծես հոռմեական ծագման լինի, ինչպես Թավրիզի դարպասի զինապահեստը, որոնց վրա դեռևս 50 տարի առաջ աչի էր ընկնում հոռմեական գերբը (Southgate, bei Ritter):

<sup>33</sup> Armand Freiherr von Schweiger-Lerchenfeld, *Armenien*, Jena, 1878, էջ 58: Մանրամասն տե՛ս նաև Jaubert, *Voyage en Armenie et en Perse*, Paris, XXVII, էջ 7-30:

<sup>34</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. III, եր., 1991, էջ 44:

<sup>35</sup> 785 թ. Անդալուսիայում տարածված հարտապետությունն է, որը Պիրենեյան քերակղզում տարածում էր գտել Հյուսիսային Աֆրիկայից։ Այնտեղ մավրիտանական հարտապետության սկիզբը դրվում է Կորդովայի մզկիթի և Գրանադայի պալատի կառուցմամբ:

<sup>36</sup> W. Hamilton, *Researches in Asia Minor, Pontus and Armenia*, New York 1984, էջ 178-179:

բնակչությունից դարձավ 15.000 1830 թ.), սակայն նվազումը դանդաղեց, երբ Տրապիզոնի նավահանգստի միջոցով ելքի հնարավորությունն ստացավ դեպի բաց ծով: Դա հնարավորություն տվեց պարսկական տարանցիկ շոգենավերի միջոցով առևտուր կատարելու, ինչն էլ նպաստեց քաղաքի կրկին վերակենդանացմանը: Քաղաքը XIX-րդ դ. 70-80-ական թթ. ուներ 50.000 թուրքախոս բնակչություն, որից  $\frac{1}{4}$ -ը հայեր էին»<sup>37</sup>: Հրզրումի բնակչության թվաքանակի վերաբերյալ նույն տվյալները ներկայացնում է նաև Հ. Աբիխը<sup>38</sup>: Բանսերի տվյալների համաձայն հայերի թիվը 1830-ականներին փոքր-ինչ աճել է: Ա. Մելքոնյանը մանրամասն քննության է ենթարկել Հրզրում քաղաքի հայերի թվաքանակը և նշում է, որ համանուն գավառի բնակչության թիվը 40.960 էր, իսկ քաղաքինը՝ 4500 ընտանիք, հետևաբար՝ 27.000 մարդ<sup>39</sup>: Եթե համեմատենք Ա. Մելքոնյանի ուսումնասիրության արդյունքները է. Բանսերի և Հ. Աբիխի բերած տվյալների հետ, ապա կարելի է նկատել, որ այստեղ առկա է էական քանակական տարբերություն:

Ա. Ռիթթեռն իր «Օսմանյան կայսրության ժողովուրդները» աշխատության մեջ ներկայացնում է Մ. Վ. Հոյշլինգի ուսումնասիրությունների արդյունքները Հրզրումի, Դիարբեքիրի և Խարբերդի նահանգների բնակչության թվի վերաբերյալ՝ նշելով ընդհանուր առմամբ 1.700.000 մարդ: Այս թիվը վերաբերվում էր 1868 թ.-ին, սակայն Հրզրումում Անգլիայի հյուպատոս Թեյլորը իր 1870 թ. ներկայացրած հաշվետվության մեջ ուղղում է Հոյշլինգի ներկայացրած թվերը՝ 1868 թ. համար նշելով բոլոր վերոհիշյալ երեք նահանգների համար ընդհանուր առմամբ 2.134.000 մարդ, որից Հրզրումի գավառի բնակիչները կազմում էին 1.230.700, որից էլ 272.000-ը՝ մահմեդական, 411.000-ը՝ քրիստոնյա, 1200-ը՝ հրեա, 357.000-ը՝ քուրդ, 2000-ը՝ ճիզվիտ և այլն<sup>40</sup>: Բարոն Հեդլարդ Նոլդեն նշում է, որ Հրզրումը 1892 թ. ուներ մոտավորապես 50.000 բնակիչ<sup>41</sup>:

Հայերի թվաքանակի վերաբերյալ ավելի արժանահավատ կարելի է համարել վիճակագրական տվյալները: Վարդապետ Վահան Պարտիզակցյի Անգլիայի հյուպատոս Թրոթթերին ուղարկած իր նամակում նշում է, որ օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչները օգտվում են վիճակագրական ոչ ստույգ տեղեկություններից: Ինչ վերաբերում է գյուղական համայնքների բնակչության թվաքանակին, ապա վարդապետը պնդում է, որ քրդաբնակ և թրքաբնակ գյուղերը կազմված են փոքրաթիվ տներից և բնակչության թվա-

<sup>37</sup> Ewald Banse, *Die Türkei*, Berlin 1919, էջ 206-207.

<sup>38</sup> H. Abich, *Aus Kaukasischen Ländern*, Band II, էջ 20:

<sup>39</sup> Ա. Մելքոնյան, *Հրզրում*, աղյուսակ 2, 3, էջ 116:

<sup>40</sup> A. Ritter, նշվ. աշխ., էջ 97-98:

<sup>41</sup> Baron Eduard Nolde, *Reise nach Innenarabien, Kurdistan und Armenien 1892*, Braunschweig, 1895, էջ 262:



քանակի առումով այդպիսի շուրջ 50 գյուղեր նույնիսկ չեն կարող համեմատվել հայկական 1 գյուղի թվաքանակի հետ: Հայերը ապրում են գերդաստաններով մինչև 100-150 հոգի կարող է լինել մեկ ընտանիքի մեջ, դա նշանակում է գրեթե 5 սերունդ իրենց երեխաներով և թոռներով: Այստեղ ներկայացվում է, որ հայերի թիվը 1888-1891 թթ. տատանվում էր 29.678-29.916-ի միջակայքում<sup>42</sup>: Ինչ խոսք, հնարավոր է, որ այս թվերի պարագայում կան որոշ չափազանցություններ, սակայն ավելի արժանահավատ են:

1872 թ. մարդահամարի տվյալների համաձայն էրզրումի ընդհանուր տարածքը կազմում է 850 քառակուսի մղոն, իսկ բնակչության ընդհանուր թիվը՝ 233.176 մարդ, որից 173.802-ը՝ մահմեդական, իսկ 59.374-ը՝ քրիստոնյա<sup>43</sup>:

1877-1878 թթ. թուրքական պետական մարդահամարի տվյալներով էրզրումում կային 45.134 շինություններ, իսկ բնակչության թիվը կազմում էր 140.272 մարդ<sup>44</sup>: Չի նշված մահմեդականների և քրիստոնյաների ստույգ թվաքանակը:

Բնակչության 1830-ական թթ. տեղաշարժերի արդյունքում էրզրումը զրկվեց հիմնականում հայ առևտրականներից և արհեստավորներից, որոնք, ինչպես հայտնի է, Օսմանյան Թուրքիայում մեծ դեր ունեին տնտեսության համապատասխան ճյուղերի զարգացման գործում: Ըստ Ա. Մելքոնյանի՝ էրզրում քաղաքից գաղթածների թիվը կազմում էր 3200 ընտանիք, այսինքն՝ մոտավորապես 20.000 մարդ<sup>45</sup>:

Հայերի թվաքանակի վերաբերյալ գերմանացի հեղինակների ներկայացրած տվյալները այնքան էլ ստույգ չեն, սակայն որպես վիճակագրական տվյալներ արժանահավատ են:

Այսպիսով, հայկական երգնկա և էրզրում քաղաքները XIX դ. շարունակելով գտնվել Օսմանյան կայսրության տիրապետության տակ, ապրում էին տնտեսական և սոցիալական ծանր կացության մեջ, սակայն այդ դժվարությունների հետ մեկտեղ կարողանում էին գոյատևել և պայքարել հանուն իրենց հոգևոր ու մշակութային դիմագծի պահպանման:

<sup>42</sup> Մշակ 1880, հ. ք1, չԳ 1 :

<sup>43</sup> A. Ritter zur Helle von Samo, *Die Völker des Osmanischen Reiches*, Wien 1877, էջ 97-98.

<sup>44</sup> A. Ritter, նշվ. աշխ. էջ 97-98:

<sup>45</sup> Ա. Մելքոնյան, *էրզրում*, Եր., 1994թ., էջ 138, 140, 145:

**Gayane Shakhkryan**  
**The Western Armenian Towns Erznka and Erzurum in the Writings  
of German Travelers**

Many German travelers have visited both Eastern and Western Armenia in the 19<sup>th</sup> century to conduct researches there. In the mentioned period Armenia was under the rule of the Ottoman Empire. The economic and social hard conditions of Armenian people were drawing the attention of foreign authors for years.

Within the frames of the present article I have weighed up the cases of the towns of Erznka and Erzurum, since Erznka has been considered a spiritual center of Armenia for centuries, beginning from the heathen period; and Erzurum, having been situated on the crossroad of the adjacent countries' transit ways and being considered as crossing point for the directions from the east to the west, and from the north to the south, was always presenting an interest for foreign authors.

Erzurum has also been considered the greatest town of the Western Armenia in the East and was an apple of discord for the neighboring countries because of its *favorable geographic position*.